

Վ Ե Ր Ժ Ե Ր Ը Ն

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՍՄԱԿԻՐ

ՍՍՑԻՍ

1883 Ս. ՏԵՐԻ

№ 10

ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ԿԱԼԻ ԵՐԳ

Սեյ դիւզացին երբ տեսնում է
 Լծած եզը տնքալիս,
 Երբ արևից նա տղւում է
 Խաւրձը հաշտ անելիս,
 Կաման վրա երբ կանգնում է
 Ջուրտ եզներին քշելիս,
 Ահա, աշագէտ նա երգում է
 Իրան կալը կալսելիս.
 «Եզը ջան, կն՛դ արտ, կալիգ ման արտ,
 Հափկըլը՝ փշրի,՝ ցորեն դուրս արտ,
 Հաշանը տրորի, լու տարման արտ
 Նս ա դու, մին եւք - իրար եզար կնք,
 Մինչև երեկոյ իրար հետ տանջուենք.
 Ես երեկոյեան կալը կը թէլի՛,
 Գեղի կանաչ խոտ քեզ լանց կը թողնեմ.
 Լուսնակ զիշերին թէզը կը քամեմ,
 Յարէն — տարմանը իրարից ջոկեմ.

Տարմանը մղանով մարաքը կ'ածեմ,
 Յորէնը ջուալով ամբարը լցնեմ:
 Երբ որ ձմեռը կը գայ, կը մրսենք,
 Գուք տարման կ'ուտէք, մենք ցորնով կ'ապրենք.
 Եզր ջան կալ արն,
 Կալիդ ման արն...


Եզր ջան, եղբայր, դու իմ աջ կուռն ես,
 Իմ թե ու թիկունք, դու իմ տան դուռն ես.
 Քեզ որ չունենամ, արտ չեմ ունենալ,
 Կալ էլ չեմ կալսիլ, ցորէն ստանալ:
 Բայց ան... ցորէնը իմ տուն չէ մտնում,
 Հորերս-ամբարս ցորնով չեն լցվում.
 Այս... աչքը դուրս գայ մեր պարտքատէրի,
 Մէկ փութ պարտքի տեղ վեց փութ կը տանի.
 Խեղճ երեխանցս ձմեռուայ կիսին
 Քաղցած կը թողնի, ինձ գերի կ'անի...
 Կալ արա, մատնդ,
 Գուն է քեզ մատնդ...

Եզր ջան, քեզ հետ տանջվում եմ, մաշվում,
 Գաշտում-արանում վարուցանք անում.
 Բայց այդ ցանքը արմատից կերած,
 Գեռ կանաչ վախտը հնձած եմ, բաժնած:
 Յորնի պարտքը չէ իմ այս ասածը,
 Գարդ ու կրակ է իմ վզին դրածը:
 Փողի պարտք ունիմ- ցորնից եմ տալիս.
 Հարկ ու բէգառը- ցորնից դուրս տալիս.
 Տան կարիքները ցորնով եմ հոգում,
 Տէրտէրի հարկը ցորէն վճարում.
 Աղքատ-անճարին ցորէն եմ բաշխում,
 Աշըղի, որբի ցորնից մաս հանում.
 Խօսքով, ցորէնը մեր բոլոր լոյսն է,
 Մեր շունչ պահողը, մեր աչքի լոյսն է.
 Ման տուր իմ եզր,
 Ապրի քու պողը....

Եզր ջան, տեսնը, թէ ինչպէս ծանր է
 Մեր օրն ու կեանքը և սրբան դառն է...
 Դու հէնց կարծեցիր, որ աշխարհքումը
 Միմիայն դու ես գերի բանտումը...
 Բայց լաւ իմացիր, որ ինձ պէս մարդիկ,
 Վատ վիճակում են-քան թէ կենդանիք:
 Աստ, ո՞վ կ'առնի քեզնից տարմանը,
 Ո՞վ կը խլի քո ձմրան պաշարը...
 Բայց մեզանից շատ մոլի մարդիկ
 Իսպառ խլում են մեր չոր ուտելիք...

Մէջ արի, եզր ջան,
 Չանս քեզ զուրբան....

Ա. ԱՐԱՐԱՏԵԱՆՑ.



ՃՇՄԱՐՏԱՍԷՐ ՄԱՆՈՒԿ

(Հարունակութիւն և վերջ*)

Տիգրանը սչինչ չը պատասխանեց ընկերոջը: Նորան
 տանջում էր այն միտքը, որ ինքը ծածկեց իւր ըն-
 կերից իւր գլխին անցկացածը, սուտ ասաց և եթէ պատ-
 մէր բոլորը, պէտք է իւր սիրելի շուփսիմէ քրոջը մե-
 ղադրէր: Տիգրանը դեռ շատ փոքր էր, երբ նորա հօրը
 մի ինչ որ անկարգութեան համար ծառայութիւնից
 արձակել էին և հայրը գլուխը արբեցողութեան էր
 տուել, նորա ընտանիքն էլ հասաւ դառն վիճակին: Նո-
 քա ստիպուած էին իրանց լաւ բնակարանից տեղափո-

*) Տես «Վարժարան» №№ 7, 8, 9,

խուել մի սենեակում և յետոյ բանը հասաւ այն տեղը, որ պիտի մուտք նկուղում բնակուէին: Սպասաւոր նոքա ի հարկէ չէին կարող ունենալ: Նորա կինը ստիպուած էր կատարել տանը բոլոր գործերը, պահել երեխանց և նոցա կերակրելու համար հոգալ. մարդը ճարում էր երբեմն երբեմն մի քանի ուրբի զանազան խնդիրներ գրելով: Այդ ուրբիներից շատ փոքր մասը տուն էր բերում, իսկ մեծ մասը նա տալիս էր խմիչքներին: Եւ երբ նորա փողերը պակասում էր, նա տանում էր տանից մի մի իրեղէն բազարը, ծախում և խմում: Ինչ որ կարելի էր ծախել, արդէն բոլորը ծախած էր: Մեծ քաջութիւն էր հարկաւոր կնոջը իւր որդոց քաղցածութիւնից ազատելու: Նորա միակ օգնականը իւր մեծ աղջիկ Հռիփսիմէն էր, որ միշտ առաւօտից մինչև երեկոյ նստած կար էր անում: Նոքա երկուսով և կարում էին, և դործում, և տունը մաքրում, և սպիտակեղէնը լուանում և հիւանդ երեխային նայում:

Հռիփսիմ, հարցնում էր նորան երբեմն երբեմն փոքր եղբայր Աշտը, դու դադրել ես:

— Այո՛, շատ եմ դադրել, պատասխանում էր նա:

— Ուրեմն փոքր ինչ հանգստացիր, զնանք զօսնելու, խաղալու, տես ինչ լաւ եղանակ է:

— Ձի կարելի, հոգիս, ասում էր Հռիփսիմէն, կարից աչքերը չը հեռացնելով, պէտք է կարը վերջացնեմ, փող ստանամ, որ ձեզ համար կօշիկներ աւնենք և մի մի շապկացու:

Ուսում տալու մասին այս ընտանիքը ի հարկ է չէր կարող մտածել: Բայց Հռիփսիմէն կարողացաւ իւր եղբայր Տիգրանի համար փոքր ինչ փող յետ գցել և այդ փողից վճարեց ուսման առաջին կէս տարուայ վարձը և յարմար հագուստ կարեց նորա համար: Գիրքն էլ նա առաւ իւր վաստակած փողերով:

— Սովորիր, Տիգրան, աշխատիր, ասում էր նա միշտ իւր եղբօրը, դու խելօք մարդ կը դառնաս և ժամանա-

կող կազատուես այս չքաւորութիւնից, լաւ բնակարան էլ կ'ունենաս, և լաւ կերակուր էլ:

— Եւ դու այն ժամանակ ինձ հետ կը բնակուես, հարցնում էր Տիգրանը:

— Եթէ մեզ չես մոռանալ, մենք էլ և մեր մայրը փոքր ինչ կը հանգստանանք:

Տիգրանը շատ սիրում էր իւր քոյր Հռիփսիմէին:

Մի օր Հռիփսիմէն շուտ զարթեցրուց Տիգրանին, ասելով՝

— Վեր կաց, Տիգրան, շուտով հանգստացիր և վազելով տօր այս 10 շապիկը Մեծատունեանի մօտ: Եւ եթէ հարցնէ, թէ մնացածը ո՞րտեղ է, կասես ձեռքին է, կարում է և վաղն անպատճառ կը բերեմ. չասես որ տանը չեմ:

— Հասկա ո՞ւր ես գնալու, հարցրուց երեխան:

— Ինձ կանչել է մեր տանտէրը, օրով պէտք է կար անեմ նորա մօտ, կըտան երևի ինձ օրական 40 կամ 50 կօպէկ: Միայն Մեծատունեանին չասես թէ ես տանը չեմ, ապա թէ ոչ նա էլ կար չի տալ ինձ. նորա շապիկները ես գիշերը կը կարեմ:

Եւ աղջիկը գնաց ուրախ ուրախ բան անելու: Իսկ Տիգրանը տարաւ շապիկները Մեծատունեանի տուն և այնտեղ երբ Հռիփսիմէին սկսեցին անարգել բոլոր շապիկները չը պատրաստելու համար, նա սուանց երկար մտածելու հաւատացրուց նորան, որ քոյրը տանը նըստած կարում է մնացած շապիկները և առաւօտը անշուշտ պատրաստ կը լինի: Այն բոպէին նորա մտքիցն էլ չանցկացաւ, որ նա սուտ էր խօսում և թէ այդ վատ է: Եւ եթէ նա ճշմարիտն ասէր, Մեծատունեանը որ քրոջը մշտական կար էր տալիս, կարող էր այլ ևս չը տալ և այն ժամանակ քաղցած պիտի մնար բոլոր ընտանիքը: Մայրը բաւական ժամանակ էր բան չէր կարողանում շինել հիւանդ երեխայի պատճառով:

Զմեռն էր և սաստիկ ցուրտ: Փայտը շատ թան-

զացել էր և չքաւորներին տներում վաղուց փայտը հատել էր: Մի քանի օր Տիգրանը ուսումնարան չէր գնում, որովհետեւ իւր թեթեւ հագուստով շրջելուց նա մըսել էր և չէին թողնում նորան ուսումնարան:

Տիգրանը շատ ափսոսում էր դասերի թողնելու համար, բայց ստիպուած տանն էր մնում, որ բոլորովին չը հիւանդանայ, թէպէտ տանն էլ դրսից աւելի տաք չէր: Հայրը վաղուց էր որ փողի երես չէր տեսել և նորա կինը ստիպուած էր մի քանի շահի տալ նորան օրէնը: Խմբիչի համար, ապա թէ ոչ կը ծեծուէր: Հիւանդ երեխան առողջացաւ և հարկաւորուեց նորա համար փոքր ինչ տաք հագուստ կարել, որ չը մըսի: Մի ամսից աւելի էր, որ տան վարձը չէին վճարել և տանտէրը սպառնում էր դուրս անելու տանից, իսկ փայտ նոքա վաղուց աչքով չէին տեսել:

— Մայրիկ, հարցնում էր փոքր Աշոտը մօրից. տանտէրը չի՞ տալ մեզ արդեօք փայտ և անկողնակալում նստած կպել էր Տիգրանին, որ գոնէ այդպէս փոքր ինչ միմեանց տաքացնէին:

— Սպասեցէք, որդիք, ասում էր մայրը, շուտով կը գայ Հռիփսիմէն և երեւի Մեծատունեանը կը տայ նորան մի երկու ուլբլի այս գլխից:

Դուռը բացուեցաւ և մտաւ Հռիփսիմէն:

— Հա՛, ինչ արեցիր, հարցրուց նորան մայրը շփոթուած:

— Ինչ արեցի, ասաց դեռ մնացածն էլ բեր և յետոյ կը վճարեմ փողը. կանխիկ տալ, ասում է, ես չեմ կարող: Պէտք է շուտով վերջացնել:

Փաթաթուեց ինչով որ կարելի էր և նստեց կարի: Փոքր երեխաները երբ լսեցին թէ փող չեն ստացել և մնալու են անփայտ, սկսեցին լալ: Մայրը լուռ ու մունջ մնացել էր տրտում, տխուր:

Տիգրանը վերադարձաւ ուսումնարանից: Նա շատ ուրախ էր, որովհետեւ վարժուհին գովել էր նորա աշ-

խատասիրութիւնը և ընդունակութիւնը և խոստացել էր ուսման վարձ չառնել տալ նորանից և ձրիապէս դասական պիտոյքները տալ նորան: Նա ուրախութիւնից էլ չը կար և չիմացաւ էլ թէ այն օրը ցուրտ էր թէ չէ այնպէս արագ գնում էր տուն: Մտաւ ներս իւր ուրախութիւնը պատմելու և որ տեսաւ տանը բոլորին էլ տխրած ու լացակրթնած, կանգ առաւ:

— Ի՞նչ է, ի՞նչ է պատահել, հարցրուց նա շփոթուած:

— Ես սառեցայ, գանգատովում էր փոքրիկ հիւանդագարձ երեխան:

— Ես էլ չեմ կարող կարել, մատներս գնաց, ասում էր Հռիփսիմէն ձեռքից կարը վայր գցելով:

Տիգրանը հասկացաւ նոցա ցաւի պատճառը և ուրախութիւնը փորուձը մնացած, նստեց Հռիփսիմէի մօտ տխուր:

— Մայրիկ, առաջարկեց մօրը Աշոտը, թոյլ տուէ՛ք գնանք ես ու Տիգրանը տաշեղ հաւաքելու:

— Ո՛ւր պիտի գնաք, աւելի կը մըսէք, ասաց մայրը:

— Ոչինչ, կերթանք շուտով և կը գանք:

— Գնացէ՛ք, գուցէ Աստուած տայ կարողանաք գրտնել, որ դիշերս փոքր ինչ տաքանանք:

— Այստեղ մօտիկ մի տանը անցեալ օրը գերաններ էին տաշում, գնանք, տեսնենք, ասաց Աշոտը Տիգրանին:

Գնացին, մտան մի մեծ տան բակը, բայց և գերանները և տախտակները արդէն տաշել էին, պրծել և տաշեղները հաւաքել, տեղաւորել:

— Գնանք միւս փողոցը, այնտեղ կարծեմ տուն են շինում, ասաց Տիգրանը:

Բայց և այն նոր շինողոյ տան առաջ էլ ոչինչ չէին թողել, բոլորը սրբել էին: Գնացին աւելի հեռու, ներս նայելով ամէն մի բակում, բայց անյաջող: Ահա տեսան մի փայտ ծախողի տուն: Բակի դուռը բաց էր և մարդ չէր երևում: Ծածուկ մտան բակը և գտան

իրանց ուզածը: Բայց այս բոլորը ուրիշինն էր, տէր ունէր: Ոչ ոք չը կար և երեխայքն էլ մտածելու ժամանակ չունէին: Ազահաբար հաւաքեցին ինչքան կարողացան և մի քանի բոպէում բեռնաւորուած, ահ ու դողով վազեցին դէպի դուռը:

— Ա՛յ, դուք գողեր, աւազակներ, գոռաց նոցա լետեից մէկը. սպասեցէք, տեսէք թէ ի՞նչ կանեմ ձեզ:

Բայց մինչև փայտի տէրը կը վազէր նոցա լետեից, նոքա արդէն փողոցումն էին: Այդ պարոնը անշուշտ կը բռնէր նոցա, եթէ դռանը չը պատահէին նորան մի կին և երեխայ, որոնք եկել էին փայտ առնելու: Այս կինը մեր ծանօթ Արշակի մայրն էր և երեխան՝ ինքը Արշակը:

— Այս ի՞նչպիսի աշխարհք է դուել, մարդ մի բոպէ չէ կարողանում դուռը բաց թողնել, զանգատվում էր փայտի տէրը կնոջը, մտնում են, գողանում: Տեսա՞ք որ վազում էին: Ժամանակը փչացել է և փոքր հասակից երեխայք ինչե՞ր են անում:

Առուտուրը վերջացրին, մայրն ու Արշակը գնացին դէպի իրանց տուն և մայրը նկատեց, որ իւր ձեռքում բռնած Արշակի ձեռքը դողում էր:

— Ի՞նչ է, Արշակ, հօմ չը մընեցար, հարցրուց մայրը:

— Փոքր ինչ, պատասխանեց երեխան:

Շտապով գնացին տուն, մայրը խմեցրուց նորան տաք տաք թէյ:

— Այժմ տաքացար, հարցրուց մայրը:

— Այո՛, մայրիկ, պատասխանեց երեխան, բայց նա դեռ էլի շփոթուած էր և աչքումը արտասուք երևում:

— Ի՞նչ է, որդի, ի՞նչ է պատահել, ո՛ւր ես ծածկում:

— Ոչինչ, ես լաւ եմ. բայց դուք տեսա՞ք այն երեխանց, որ փայտի կտորներ էին վազեցնում:

— Քեզ ի՞նչ, հարցրուց մայրը:

— Ես նոցանից մէկին ճանաչեցի, նա այն Տիգրանն է, իմ դասարնկերը, որի մասին ես ձեզ պատմում էի:

Արշակը չը կարողացաւ իւր լացը բռնել:

— Մի՞թէ, ի՞նչ ես ասում, այ անպիտաններ, բացականչեց մայրը, և դու նորա հետ բարեկամութիւն ես անում, ամօթ չէ:

— Ես չէի իմանում, նա լաւ երեխայ էր երևում, ասում էր Արշակը:

— Եւ ուսումնարանի վարչութիւնը ի՞նչպէս է թող տալիս այդպիսի բաներ, վրդովուած ասում էր մայրը, ես վաղը կերթամ, կը յայտնեմ և կը խնդրեմ որ ուսումնարանից դուրս անեն գողին: Չէ՞ որ ուրիշների համար էլ նա վատ օրինակ կը լինի: Եւ նա քո դասարնկերն է հա:

— Ո՛չ, մայրիկ, մի անէք այդպէս, թող սովորի նա: Ինձ ի՞նչ, թէ նա ինչ է անում դուրսը, ես նորա օրինակին չեմ հետևիլ, չեմ շարունակի նորա հետ ընկերութիւնս:

— Եթէ խօսք կը տաս, ասաց մայրը:

— Այո՛, մայրիկ, ես տեղս կը փոխեմ դասարանում և հետը չեմ խօսի:

— Լա՛ւ, եթէ այդպէս է, գլուխը քարը: Ի՞նչպէս կարելի է այդպիսի դասարնկերներ ունենալ: Ահա աշնան կերթաս գիմնազիա և այնտեղ աւելի լաւ ընկերներ կ'ունենաս, լաւ գասակարգի մարդկանց որդիք:

— Ես, մայրիկ, միշտ պատուով կը պահեմ ինձ և կաշխատեմ որ ընկերներս էլ լինին լաւ երեխայք, հաստատաբար ասաց Արշակը: Եւ երեխան հանգարտուեց:

Իսկ Տիգրանենց տանը այլ տեսարան էր: Տաշեղները և փայտի կտորները վառել էին և երեխայքը տաքանում: Հռիփսիմէն մատները տաքացրած շտապով շարունակում էր իւր կարը: Բոլորն էլ ուրախ էին: Մայրը հարևանից մի բուռը թէյ էր փոխ առել և երեխայք

նստած թէյ էին խմում կրակի առաջ: Միայն Տիգրանը նստած էր անկիւնումը և մտքից չէր գնում «գողեր, աւազակներ» բառերը:

— Բայց մի՞թէ ես գող եմ և աւազակ, մտածում էր ինքն իրան երեխան: Չէ՞ որ ես ուխտել էի պատուաւոր լինել: Այո՞, ամէն մարդ էլ կասէր այն փայտի տիրոջ պէս, որ ես գող եմ: Եւ եթէ բռնել էր ինձ. չէ՞ որ բերդը կուղարկէին ինձ միւս գողերի պէս: Բայց չէ՞ որ իմ միտքը գողութիւն չէր: Ի՞նչ անեմ, տէր Աստուած: Չը պէտք է գնայի տաշեցի: Հապս երեխանց և մօրս լացը, քրոջս անգործ մնալը և մեր ընտանիքի սովամահ լինելը..

Շատ ծանր էր երեխայի համար այս խորհրդածութիւնը և ուժը պիտի ասէր իւր տանջող մտքերը և խորհուրդ հարցնէր: Մօրը որ ասէր, նա կը պատասխանէր ինչպէս սովոր էր, թէ «ի՞նչ պատուաւորութիւն, երբ որ քաղցած մեռնում ես»:

— Պէտք է Արշակին ասեմ, պատմեմ բոլորը, մըտածում էր Տիգրանը, միւս օրը ուսումնարան գնալիս: Նա բարի է, նա կը հասկանայ և կասէ, որ ես մեղաւոր չեմ:

Նա մտաւ դասարան, բայց Արշակը իւր սովորական տեղը չէր նստած: Դասը վերջացած ժամանակը Տիգրանը շտապեց գէպի իւր ընկերը խօսելու:

Արշակը գլուխը չէր վեր քաշում սեղանից, իբր թէ չէ տեսնում Տիգրանին. բայց վերջը ասաց նորան շփոթուած:

— Ի՞նչ ես ուզում ինձանից, ես էլ քո ընկերը չեմ:

— Ինչո՞ւ, Արշակ, ի՞նչ եմ արել քեզ:

Որովհետեւ ես երեկ փայտի ծախողի մօտ էի և տեսայ քո արարմունքը, չոր ու ցամաք ասաց Արշակը: «Դու գող ես»:

Տիգրանը մնաց սառած: Ուզում էր բացատրել իւր

արարմունքը, բայց Արշակը վեր կացաւ տեղից և հե-
ռացաւ:

—Ուրեմն, մտածում էր Տիգրանը, ես գող եմ, ես
պատուաւոր չեմ: Բայց ես պէտք է ապրեմ, որ կարո-
ղանամ մօրս և իմ փոքր եղբայրներին ազատել սովա-
մահուլից: Նոքա ինձ գող չեն ասիլ. ուրեմն էլի
պիտի ստել և գողանալ, ուրեմն այն գեղեցիկ մտքերը
ինձ համար ցնորք են, աւելորդ...

Երկար ժամանակ լալիս էր Տիգրանը տանը անկող-
նում և Հռիփսիմէն նկատեց, որ երեսխայի երեսին էլ
ծիծաղ չէր գալիս:

Իսկ Արշակը գլուխը բարձրացրած գնում էր տուն.
նա կարծում էր թէ շատ լավ է արել և շատ գոհ էր:

—Ափսոս Տիգրան, ասում էր նա, բայց և այնպէս
նա իմ ընկեր չի կարող լինիլ. ես պատուաւոր եմ, իսկ
նա գող և աւազակ:

Իսկ Տիգրանը մնաց առանց բարոյական օգնութեան,
որ նա սպասում էր իւր առաջուան գանաչներ Ար-
շակից:

Թարգ. Գ. Տ. Ա.

ՍԵՐՄՆԱՑԱՆ

«Ուր ես գնում, այ գիւղացի,
Քեռան տակին տնքալով.

Այդ քնչ բեռն է՝ որ շալկած ես,
Որ տանում ես տանջուելով»:

—Սրի ինձ հետ, դու կը տեսնես,
Ուր եմ տանում տնքալով....

Երկրի յոյսն է իմ շալակին՝

Ես տանում եմ տանջուելով....

Ասաց, գնաց, էլ չը խօսեց,

Ինչքան նորան զօռեցի....

Իր ցէլի մօտ կանգնեց, նայեց,

Ծանր բեռը ցած դրեց:

—Այժմ դու տես թէ ես ինչպէս

Սերմ կը ցանեմ շաղ տալով,

Իմ այս գործից կը գուշակես

Թէ ուր եկայ տանջուելով...

Ասաց, կապեց իր գոգնոցը,

Ապա նայեց երկնքին,

Սիրտը խօսեց, լեզուն շարժուեց...

Ես նայեցի արցունքին...

«Կապուտ երկինք, հալնլ սրտով

Քեզ եմ կանչում՝ միայն քեզ...»

Որ դու արե—անձրև շատ տաս

Իմ այս սերմին՝ սրբի պէս...

Դու լաւ գիտես, թէ քանի՛ մարդ

Աչք կը գնի ցանածիս,

Քանի՛ պարտքեր ու պատուհաս

Միշտ կը սպասեն սերմածիս...»

Սյուպէս ասաց ու երեսին
Խաչակնքեց դողալով,
Սերմը լցրեց գոգնոցի մէջ՝
Սկսեց ցանել իր բունով...

* * *

Յանկարծ մի մուկ վազեց, թռաւ,
Նորա առջև ծվծվաց.

«Մեզ համար էլ սերմը ցանիր;
Որ չը կրենք ողջ սերմած...»

— Ահա... այս ձեր ցեղին լինի,
Պտղաբերուի ձեզ համար.

Միայն ցանքիս ձեռը չը տաք,
Մեղք եմ մոռկիկ, ու անձար...

Երկրորդ բուռը դեռ չէր ցանել,
Մի մեծ մորեխ երևաց.

«Մեզ էլ մասը տուր քո սերմից,
Որ չը լափենք կանաչած...»

— Սյս էլ ահա... ձեզ եմ տալիս,
Թող շատանայ ձեզ համար.

Կանաչ արտիս վնաս չը տաք,
Խեղճ եմ, աղքատ ու անձար...

Երրորդ բուռը դեռ չէր ցանել,
Մէկ էլ տեսնես մի մրջիւն.

«Մեզ էլ մաս տուր, թէ չես ուզում՝
Սերմդ կրենք մի անկիւն...»

— Ձեզ շատ լաւ եմ ես ճանաչում,
Այ մրջիւններ, անկուշտ էք.

Ահա... այս էլ թող ձեզ լինի,
Ողջ սերմածս չը կրէք...

Յետոյ յանկարծ կաշաղակը
Թռաւ, եկաւ նորա մօտ.

«Պարոն, մեզ էլ մարդատեղ դիր,
Մենք գողեր ենք, չենք երկչոտ»:

— Ահա... այս էլ թռչնոց դասին,
 Դուք չ'ունենաք քէն ու ոխ.
 Իմ ցանածը չը ժողովէք,
 Մեղք եմ, խեղճ եմ, պարտքակոխ...
 Մէկ էլ յանկարծ վերև նայեց,
 Տեսաւ մի ծեր՝ ալևոր.
 «Բա՛րբի, ո՞վ ես, ի՞նչ ես ուզում,
 Մա՛րդ ես թէ սուրբ զորաւոր»:
 — Երբեմն, այո՛, ես մարդ էի.
 Բայց այժմ եմ թեաւոր.
 Իմ պալատը ամպերի մէջ,
 Շուրջս քաջ քաջ ձիաւոր:
 Իմ պալատից դուրս են թռչում
 Սրեր, նետեր հրեղէն.
 Իմ պալատից վայր են թափվում
 Բի՛ւր կարկուտներ սառցեղէն...
 Դու խոստացիր, որ տաս անոտ
 Ողորմութիւն աղքատաց.
 Ապա թէ ոչ՝ կարկուտ կ'ստան՝
 Քո ցանածին անաստուած...»
 Ասաց, պոճաւ, դէմքը շրջեց,
 Էլ չերևաց ծերունին.
 Իսկ զիւրացին դողաց, սարսեց,
 Եւ թռթռաց իր հոգին:
 — Ո՞վ սուրբ, փրկի՛ր մեր այս հանդին,
 Հեռու պահիր կարկուտից.
 Ահա... այս էլ «խաչի սէրը»,
 Թող աղատուենք վտանգից...
 Վերջին անգամ խեղճը լեռեց
 Աղքատներին լալաչքով,
 Եւ տերտէրի, օտարների
 Մասը սերմեց սուրբ սրտով:
 Ապա կանգնեց ակօսի մէջ
 Աչքը քցեց երկնքին.

«Ինչ էլ մնաց, այն ինձ տուր, Տէր,
Հնձեմ, կախեմ, տամ պարտքին...»

«Ի՛նչ ես տանում, այլ գիւղացի,
Բեռան տակին տնքալով:»

— Երկրի յոյսն է իմ շալակին՝
Ես տանում եմ տանջվելով...

Փորձիր ինձ պէս սերմը ցանել,
Արտ կը ստանաս դու բարով...

ԱՂԷՔՍ. ԱՐԱՐԱՏԵԱՆՅ.

ՁՈՒԱՐՃԱԽՔՆԵՐ, ՀԱՆՆԵՆՈՒԿՆԵՐ, ԽՆԴԻՐՆԵՐ:

Իններորդ № ՚ի մէջ գտնուած զուարմախրների բացատրութիւնը:



63) Համ. ամ. ամբար. բար. բարձ. ձու: Համբարչո՛ւմ

64) Արամազդ:

65) Սոխակ:

66) Գիշեր: 67) Խաղսղ: 68) Մեծպաս: 69) Լուսին:

70)



„Հախմատ“ խաղի ընթացքի բացատրութիւնը.

		19. ա-թ-է	16. վ-ա-զ էր (ըէ)	13. ելան էր-հ	10. խ-ել (ը) ան-էր		
18. հերու- ներ ա-ւլ.	15. պատ անեգի- կ	24 ակ ունք.	21 օր ու ս-ել	6. ն-ու ն-եր դ- կարմրիկ	3. կն-եր եւ ծիրան ի-ծ.	12. ան փող բոց	6. փող (ց) ձու
23 արեգ.	20. ք-օձ ու ն-եր մ.	17. ն-ա-ը- ուռ	14. ւ-ի-ք օձ ոյն	11. ըն-դ- եղեգ	8. դ.եղ է դան	5. ծով ու	2. կին եւ-եր կիր-եր
		22. աչք-ունք է (սծ) ին	7. եղեգ. նիգ (կ)- ըն	4. ով-եր կնի	1. երկ ներ- եր		

Երկներ երկին և երկիր,
 Երկներ և ծիրանի ծով.
 Երկն ի ծովուն ունէր զկարմրիկ եղեգնիկն.
 Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
 Ընդ եղիգան փող բոց ելանէր.
 Եւ ՚ի բոցոյն պատանեկիկ վազէր,
 Նա հուր հեր ունէր.
 Ապա թէ բոց ունէր մուրուս
 Եւ աչկունքն էին արեգակունք:

ԽՄԲԱԳԻՐ—ՀՐԱՏԱՐԱԿՈՂ Ն. ԽՈՍՐՈՎԵԱՆ

Дозволено цензурою. Тифльсь, 13 Мая 1883 г.
 Типография М. Вартамянца и К. Тройцк. пер. № 11.

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ Ներսիսեան Հայոց Ազգա-
լին Հոգևոր Դպրանոցի հրահրում է նոյն Դպրա-
նոցի համար ՏԵՍՈՒԶ. ցանկացողն այդ պաշտօնը
յանձն առնելոյ, թող բարեհաճի իւր յօժարութիւնը
զրաւոր առաջարկելու Հոգաբարձութեան մինչև
գալոց ՅՈՒՆԻՍ ամսոյ 20-ն:

Տեսուչը համարվում է միևնոյն ժամանակ ան-
դամ Հոգաբարձութեան և նախագահ մանկավար-
ժական ժողովի և նրա պարտաւորութիւնն է հսկել
Դպրանոցի ուսումնական և անտեսական ներքին
բարեկարգութեան և լաւաշագիծութեան մասին:

Տեսուչը պիտի լինի համալսարանական ուսումն
ստացած և հմուտ հայկական լեզուի գիտութեան
և ունենալու է Դպրանոցում աւանդուող մի որ և է
առարկայից շաբաթական 10—12 դաս:

Տեսչին նշանակած է ուճիկ դասերի վարձույր
միասին 3000 ու. տարեկան:

Ցանկացողը կարող է ստանալ Դպրանոցի տը-
պած կանոնադրութիւնը:

Հոգաբարձո՝ ԻՇԽԱՆ Ն. ԱՄԱՏՈՒՆԻ

Գործակար Բ. ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՆԿԱՆ ԹԵՐԹ

ՄԻ ԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԻՄ

1—2 տպագրական թերթից բաղկացած:

Հրատարակվում է Երևանում: Տարեկան դինն է 3 մանէր
կանխիկ վճարելի: Ստորագրուել կարելի է խմբագրատանը:
Օտարաքաղաքացիք դիմում են հետևեալ հասցեով. ВЪ Г.
Эривань, Въ редакціи журнала «Гигіеническій листокъ»
Խմբագիր հրատարակիչ՝ Երևանայ քաղ. բժիշկ
ԼԵՒՈՆ ՏԻԳՐԱՆԵԱՆՑ.

ՅԱՌԱՋԻԿՈՅ 1883³⁴ թ. ԵՐԿՐՈՐԿ ՏԱՐԵՇՐՋԱՆԻՆ

„ՎԱՐՃԱՐԱՆ“

Մանկավարժական ամսագիրը կը հրատարակուի նոյն գիրքով, նոյն ուղղութեամբ, նոյն պրօգրամայով և նոյն աշխատակիցների գործակցութեամբ:

Բաժանորդների թիւը աւելանալուն պէս, ամսագրի շրջանը կընդլայնենք:

Տարեկան բաժանորդագինն է 5 ռուբլի Կանի: Ընդէի: Սակայն խմբագրութիւնս, ի նկատի առնելով ուսուցիչների և առհասարակ ազգային պաշտօնեաների մեծ մասի նիւթական անապահով գրութիւնը, և զոցա գործը զիւրացնելու համար որոշել է, որ նոքա ստորագրուելիս, մինչև Օգոստոսի 15-ը վճարեն 2 ռուբլի. նոյեմբերին 2 ռ. և Փետրուարին 1 ռ.

Տարին սկսվում է Օգոստոսի 15-ին և վերջանում Յունիսի 1-ին, տարին հրատարակելով տասը տետրակ:

Թիֆլիզում ստորագրուել կարելի է պ. Եփրեմ Ծատուրեանի լամպային մագազինում: Օտարաքաղաքացիք գիմում են այս հասցեով՝ Вѣ Тифлисѣ. Вѣ Редакціи педагогическаго журнала „Варжаранъ“: Իսկ արտասահմանից՝ Tiflis (Caucase.) Rédaction du journal pédagogique „Varjaran“.

Խմբագիր. Նիկոլ ԱՅՈՍ ԽՈՍՐՈՎԵԱՆ:

„ՎԱՐՃԱՐԱՆԻ“ Խմբագրութիւնը փոխադարձաբար ընդունելով Կ. Պոլսում հրատարակուող „ԲՈՒՐՍՍՏԱՆ ՄԱՆԿՈՅ“ մանկական թերթի ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ, պատիւ ունի սորանով լայանելու, որ բաժանորդ գրուել ցանկացողք կարող են գիմել Խմբագրութեանս, վճարելով կանխիկ տարեկան 2ՈՐՍ ռուբլի:

